Բ

7, ԱՇԽԱԼԻ

Ճանապարհնիս այժմ ուղղակի 1 ½ ժամ արևելեան հարաւ է Ամատէ. ճանապարհի ձախ կողմն կը բարձրանայ Մերկեզերի վիճակն, իսկ աջն ընդարձակ դաշտս։

Միշտ տափարակ դաշտի մէջ առաջ գնալով՝ արևմտեան դաշտի կեդրոնէն քիչ հիւսիս Աշխալի մեծ գիւղն մտանք, որ շինուած է Դաշլի գետոյն աջ ափից քիչ հեռի։

Այս գիւղի դիրքն հիանալի է, ամեն կողմ տեսարանը բաց, իւր հորիզոնը անարգել շրջապատուած կերևի, յարևմուտս Ղլիճ կետուկի և Ջրաբաշխ լեռներու մէջ գտնուած ամբողջ դաշտն և դաշտի ետևն 9—10 ժամ հեռաւորութեան վերայ բարձրացած Խա-